

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաւրանչիւր բառին 2 կոպեկ.  
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՅՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՄՇԱԿ

### ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

«Մշակ» վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը ՎՅՑ ռուբլի, մէկ ամսվայ  
նր—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվայ համար 3 զօլլար,  
Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նախաձեռնել և  
ծրարներ ուղարկելու, պէտք է գիտնել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;  
իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լիցուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Ի Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օժանդակ պայման.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Մամուլ. Կատարողական դասի մէջ. Նամակ  
Նոր-Բայազէտից. Նամակ Խմբագրութեան. Ներ-  
քին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ  
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՐ-  
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-  
ԿԱՆ. Ինչ է առաջարկութիւնը:

#### ՕԺԱՆԴԱԿ ՊԱՅՄԱՆ

Այն իրարանցումը, որ սկսվեց մեր ազ-  
գաւորական մէջ վաշխառութեան  
դէմ հրատարակված օրէնքի շնոր-  
հիւ, շարունակում է հանդէս բերել մեր  
կենտրոն տնտեսական կեանքը: Կրտսեր  
ներքին լուրերը, որ չէ մնացել համարեա  
մի անկիւն, ուր ժողովուրդը պատմեց  
ինչի կեղծումները և վաշխառուների խո-  
րամանկ որոգայթները: Սրէնքով սահման-  
ված ամենաբարձր տոկոսը, 120%, բոլոր-  
ովին անձանցին է մեր ազգաբնակչու-  
թեանը, որը տուել է մինչև այժմ վերջրած  
գումարի համար 20, 40—100 և աւելի  
տոկոս: Հասկանալի է, որ գիւղական դրա-  
մատները և վաշխառուների նոր օրէնքը  
աճարկու տպաւորութիւն գործեց և սար-

սաւի զցեց նրանց մէջ, իսկ ազգաբնակչու-  
թեան մեծամասնութեան համար դարձաւ  
մի միջոց բողոքի սկզբնական քայլը ա-  
նելու համար:

Օրէնքը շատ ժամանակակից էր և կեն-  
սական. նա ասպարէզ եկաւ մի շատ տա-  
րածված և հիմնական շարքի առաջն  
աւելու համար: Եւ անկասկած, վաշխա-  
ռուական արշաւանքների համար մի յայտ-  
նի չափով սահմանափակվեց այն անսանձ  
գործունէութիւնը, որ ոտի տակ էր տուել  
ընդարձակ տարածութիւններ և որի ա-  
ռաջ ազգաբնակչութիւնը խոնարհվում էր,  
իսկ վարչութիւնը և օրէնքը լուծւում էին:  
Այժմ կայ յենակէտ հալածելու այս կամ  
այն գիւղական տղուկին, պատժի և տու-  
գանքի ենթարկելու վաշխառուին, որ օգտ-  
վելով իր դրացու անկանքի վրէժակից,  
հրամայում է ընդունել դրամ փոխառու-  
թեան ամեն տեսակ պայմաններ: Այդ  
այդպէս է. սակայն օրէնքը միայնակ ան-  
կարող է էական օգնութիւն հասցնել ազ-  
գաբնակչութեան, որովհետեւ պակասում են  
ուրիշ միջոցներ բաւարարութիւն տալու  
ժողովրդի կարիքներին:

Արդարեւ, այնտեղ, ուր կարել է մեծ է  
և ազգաբնակչութիւնը ստիպված է գիմել  
այս կամ այն հարուստ անհատին օգնու-

թիւն խնդրելու, անշուշտ դժուար է գտնել  
և օրէնքի խախտման ձեւեր: Օրինակ, այն  
կարծեալ, որ վերջրել է 100 ռուբլի և  
պէտք է տոկոս տայ 12 ռուբլի, գրում է  
թղթի մէջ այդ գումարը, իսկ վերջնում  
է միայն 80—70 ռուբլի և այդպիսով ի-  
րապէս նա տալիս է այն տոկոսը, որ պա-  
հանջում է նրանից փողատէրը: Նոյնը ի-  
րագործվում է և զանազան տուգանքներ  
նշանակվում պարտքի հատուցման ժամա-  
նակը անցնելուց յետոյ, իսկ այդ ժամա-  
նակը նշանակվում է կարճ, որից յետոյ  
թուղթը փոխվում է նոր թղթի մեծաց-  
րած գումարով:

Չարիքի առաջն առելու համար պէտք  
է միջոցներ որոնել ուրիշ աւելի էա-  
կան ձեով բաւարարութիւն տալու ազ-  
գաբնակչութեան մէջ նկատված փողի կա-  
րիքին: Այդպիսի ձեւերից մէկն է զարգաց-  
նել փոխառու դրամարկղերի հաստատու-  
թիւնը՝ ինչի դա պետութեան կողմից  
սահմանված, թէ ազգաբնակչութեան սե-  
փական ջանքերով իրագործված: Վաշխա-  
ռութեան դէմ օրէնքը, իրան զինակից  
ունենալով էժան կրեդիտի մի ամբողջ  
սխտեմ, կարող է աջողութեամբ կատա-  
րել այն բարերար գործը, որ աչքի առաջ  
է ունեցել օրէնքից:

#### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

##### Մ Ա Մ Ո Ւ Լ

Ուղիղ հարկեր տալի է, ինչ կովկասեան հան-  
քային ջրերը յայտնի են դառն իբրև գեղեցիկ  
բուժիչ միջոց: Հարկւրամեայ գոյութեան պատ-  
մութիւնը, ի հարկէ, ցոյց է տալիս մի աստի-  
ճանաբար զարգացում, բայց զարգացում շատ  
զանազան քայլերով: Ի նկատի առնելով թէ ի-  
րաքանչիւր ամառ մարդկանց ինչ ահագին բազ-  
մութիւն է հաւաքվում Պետրոպոլիս ջրերում,  
պէտք էր սպասել, որ այդ պահանջը համեմատ  
էլ շատ արագ կերպով կը բազմանային յարմա-  
րութիւնները, առանց որոնց ժամանակակից  
կենքը չէ կարող առաջ գնալ: Բայց յարմա-

րութիւնների կողմից կովկասեան ջրերը մինչև  
այժմ էլ մեծամեծ տրտուշներ չեն առնի և տա-  
լիս և շատերը, ինչպէս յայտնի է, աւելի չա-  
ն համարում գնալ եւրոպական կուրորտները,  
որոնք թէև չեն կարող համեմատվել կովկասեան  
ջրերի հետ իրանց յատկութեամբ, բայց ունեն  
այն առաւելութիւնը, որ հիւանդներին ամեն  
տեսակ յարմարութիւն են տալիս: Հարկւր տա-  
րիներ ընթացքում չը կարողանալ հասնել այն-  
պիսի կատարելագործութեան, որ ունեն արտա-  
սահմանեան ջրերը—դա յետամնացութեան մի  
տեսակ նշան էր: Այդ պատճառով չէ կարելի  
չարձանագրել այն ուրախալի հանգամանքը, որ  
կովկասեան կուրորտները, անհերքելի այժմ իրանց  
երկրորդ հարկւրամեայով, ինչպէս հարկւրում է  
«Руч. Вд.» լրագրի թղթակիցը, կենթարկվին  
մի ցանկալի կերպարանափոխութեան, որ կա-  
ւելցանի շատ յարմարութիւններ հասարակու-  
թեան համար: Այդ գործը ձեռք է առնել երկրա-  
գործութեան և պետական կարուածների միջնա-  
րութիւնը: Խոշոր փոփոխութիւններ իրագործե-  
լու համար՝ միջնաբերութիւնը դիմել է կապիտա-  
լիստների օգնութեան, և այս անգամ էլ բնա-  
կան մեծ հարստութիւնները շահագործելու հա-  
մար կանչված է մասամբ օտար կապիտալը:  
Պրանտ-առնական մի ընկերութիւն ստանում է  
հանքային ջրերի վաճառման մենաշնորհը այն  
պայմանով, որ մեծ հիւանդները և կուրալներ  
կառուցանի չորս տեղ: Մի և նոյն ժամանակ  
ինքը, կառավարութիւնն էլ մի շարք միջոցներ  
է գործ դնում մինչև այժմ եղած դրութիւնը ար-  
ժատապէս բարեփոխելու համար: Բայց ամենից  
համակրելին այն է, որ կազմվում են բարեգոր-  
ծական ընկերութիւններ, որոնց նպատակն է  
հարաւորութիւն տալ չունեւորներին ջրերից  
օգտվելու համար:

Մի մասնաւոր անձի եռանդի շնորհիւ, Ե-  
սէնտուկի մէջ կազմակերպվում է «Մանատո-  
րի» անունով բարեգործական ընկերութիւն,  
որ նպատակ ունի բնակարան տալ չքաւոր  
հիւանդներին և պահպանել նրանց: Այս քանի  
օրերը կովկասեան ջրերը եկաւ կամ Բախմե-  
տով, Վայսուրի Մարալի զարգացական հաս-  
տատութիւնների մէջ սովորող աշակերտների  
համար կառուցանելի սանատորիի տեղ ընտրե-  
լու նպատակով: Եսէնտուկում այսպիսի սանա-  
տորի կը բացվի երկու տարվանից:  
Կաղանիք չէ, որ հանքային ջրերում բրձի-

#### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

##### ԻՆՉ Է ՍՈՍԱՋԱԿԻՍՈՒԹԻՒՆԸ

(Ըստ Ն. Միխայլովի)

##### III

Բնական և հասարակական օրգանիզմների հա-  
մեմատութիւնը և զուգարկութիւնը նոր բան է,  
չարունակում է Միխայլովի: Դրէպերից ու  
Սպէնսերից առաջ այդ հարցով զբաղվել են շատ  
մտածողներ ու գրողներ, ինչպէս Պլատոն, Հօբս, Դե-  
կարտ, Գեթե, և նոյն իսկ իրաւաբանների մի  
ամբողջ զարդ Գերմանիայում, «օրգանական»  
կոչված զարգացում:

Սպէնսեր հասարակական օրգանիզմի տեսու-  
թեան ապացուցումը սկսում է հասարակութիւն-  
ների և գործարանաւոր մարմինների մէջ եղած  
նմանութեան և տարբերութեան կէտերի յիշա-  
տակութեամբ:

Նմանութեան կէտեր նա ցոյց է տալիս չորս  
հատ, որոնց շատ մեծ նշանակութիւն է տալիս.  
տարբերութեան կէտեր նոյնպէս չորս հատ է  
գտնում, բայց նրանց աւելի քիչ նշանակութիւն  
է տալիս: Այդ տարբերութեան կէտերից ամե-  
նակարևորը չորրորդն է: «Կենդանու մարմնի  
մէջ հիւստամօզի միայն որոշ տեսակն է օժտված  
զգայնութեամբ, մինչդեռ հասարակութեան մէջ  
նրա բոլոր անդամներն էլ զգայուն են: Այդ  
տարբերութեան նշանակութիւնը Սպէնսեր աշ-  
խատում է թուլացնել նախ և առաջ նրանով,  
որ ջլալին համակարգութիւն չունեցող ստորին  
կենդանիներից մի քանիսի մէջ՝ եղած թուլ

զգայնութիւնը հաւասարապէս բաշխված է բո-  
լոր մասերում:

«Բայց այդ, ասում է Սպէնսեր, մենք պէտք  
է յիշենք, որ հասարակութիւններն էլ բոլորու-  
միւն զուրկ չեն այդ տեսակ տարբերացումից:  
Համայնքի անհատները թէպէտ բոլորն էլ զգա-  
յուն են, բայց զգայուն՝ ոչ բոլորը համահա-  
սար չափով: Երկրագործութեամբ կամ առհա-  
սարակ ծանր աշխատանքով պարապող դասա-  
կարգերը շատ աւելի քիչ տպաւորվող են, թէ  
մտաւոր կողմից, թէ յուզմունքների կողմից,  
քան միւս դասակարգերը. այդ կողմից նրանք  
սաստիկ խիստ տարբերվում են մասնաւոր  
բարձրագոյն մտաւոր կրթութիւն ստացած դա-  
սակարգերից: Բայց այնուամենայնիւ այդ կէտը  
ներկայացնում է բաւական խիստ հակապատ-  
կեր քաղաքական և անհատական մարմինների  
մէջ, որ չը պէտք է երբեք մոռնալով անել, ու-  
րովհետեւ նա յիշեցնում է մեզ, որ մինչդեռ ան-  
հատական մարմիններում բոլոր մասերի բարո-  
ւութիւնը լիովին ստորադրված է բարոյութեա-  
նը ջլալին համակարգութեան, որի հաճելի կամ  
հիւստամօզ գրգռման մէջ է կայանում կենքի  
ամբողջ բարձր կամ չարձր—քաղաքական  
մարմինների մասին չէ կարելի ասել նոյնը:  
Կենդանու առանձին մասերի կենքը կախվում  
է ամբողջի կենքից, այդպէս էլ պէտք է լի-  
նի իսկական, որովհետեւ այդ ամբողջը ունի հա-  
ւաքական գիտակցութիւն, որ ընդունակ է զգալ  
հաճութեւ կամ ցաւ: Բայց հասարակութիւնը ուրիշ  
բան է,—նրա կենդանի միաւորները չեն կորց-  
նում և չեն կարող կորցնել իրանց անհատա-  
կան գիտակցութիւնը, իսկ համայնքը միւս  
կողմից չունի հաւաքական գիտակցութիւն իբրև  
մի ամբողջութիւն: Այդ է ահա այն գլխաւոր

անփոփոխ պատճառ, որի շնորհիւ պետութեան  
քաղաքացիների բարեկեցութիւնը չէ կարող եր-  
բէք արդարացի կերպով զոհ բերվել ինչ որ երե-  
ւակայական պետական չափի համար, այլ ընդ-  
հակառակ պետութիւնը ինքը պէտք է գոյու-  
թիւն ունենայ միմյանի պետականների շահերի  
համար: Հաւաքական կենքը և կենքը այդ դէպ-  
քում պէտք է ենթարկվի առանձին  
մասերի կենքերին, և ոչ թէ առանձին  
մասերին՝ հաւաքական կենքին:

Վերջին տարբերութիւնը այն աստիճան է ա-  
կան է և կարեւոր, որ նա մինակ բաւական  
և ոչնչացնելու գործարանաւոր մարմնի և հասա-  
րակութեան մէջ երևակայած զուգնթացութիւ-  
նը: «Ձը մտաւորաբար այդ տարբերութիւնը, ինչ-  
պէս խորհուրդ է տալիս Սպէնսեր, և մինչդեռ  
ժամանակ ընդունել այդ անալոգիան—անկա-  
րելի է: Բայց Սպէնսեր պնդում է թէ կայ այդ  
անալոգիան, այդ նմանութիւնը, որ և լուսա-  
բանում է մանրամասնօրէն և յաճախ շատ սրա-  
միտ կերպով, սակայն ի դուր, որովհետեւ ոչին-  
չով չէ կարելի վերացնել վերոյիշեալ տարբե-  
րութիւնը:

Նրբ ձուռն, որից պէտք է դուրս գայ մարդը  
կամ կենդանին, բաժանվում է տարբեր՝ չիճու-  
կային, լորձիւնային և անօթային խաւերի,  
այդպիսով երևան է դալիս աշխատանքի ֆիզիո-  
լոգիական բաժանման սկզբնաւորութիւնը: Ժա-  
մանակի ընթացքում այդ խաւերից իւրաքան-  
չիւրը բաժանվում է տարբեր-տարբեր հիւստամ-  
քների և գործարանների, որոնցից իւրաքանչիւրը  
կատարում է որ և է առանձին պաշտօն: Ուսման  
ստանձնում են կերպարու մարմնը, ուսման  
տպաւորութիւններ ստանալու, ուսման օղի թը-  
թուածինը մարմնին մատակարարելու և նրա

տեղ ամփոփելու արտաշնչու, ուսման ջը-  
ղային համակարգութեան կենտրոնական գործա-  
րանի հրամաններով այս կամ այն արտաքին  
չարժուք կատարելու աշխատանքը և այլն: Որ-  
քան սաստիկ է որոշված այդտեղ պաշտօնների  
մասնաւորումը, այնքան աւելի գործարանաւոր  
մարմինը բարձր է կանգնած կենդանաբանական  
սանդղակի վրա, այնքան աւելի նա զարգա-  
ցած է, բարձր է:

Եթէ տեսնում ենք, որ անհատական մարմնի  
գործարանները հեղհեղեղ աւելի ու աւելի մաս-  
նաւորացնում են իրանց գործունէութիւնը և  
այդպիսով նպաստում են ամբողջի բարդացման,  
ասում ենք, թէ մարմինը զարգացում է, առա-  
ջադրվում է: Եթէ այնպէս պատահէր, որ գոյու-  
թեան կուրը անհատական մարմինը այնպիսի  
պայմանների մէջ գնէր, որ նրա գործարաննե-  
րից մի քանիսը զարգային գործելուց, և նրա  
կազմութեամբ աւելի պարզանաւոր դառնար,  
կասէինք, թէ անհատը յետադիւրս է: Այդպե-  
րակ կենդանիների աչքերը, երկարատեւ անգոր-  
ծածութեան շնորհիւ, դադարում են իրանց  
պաշտօնը կատարելուց, երբեմն նրանց կողմից  
բողբոլվել կոպտ և նրա և բողբոլում: Պարզ  
է, որ այդ անհատները աւելի միատեսակ են  
դառնում քան իրանց անկողի ցեղակիցները.  
արտաքին աշխարհի աղբաժ տպաւորութիւնները  
հաղորդելու աշխատանքը, որ առաջ բաժանվում  
էր չինոզ զգայարանների մէջ, այժմ բաժան-  
վում է միայն չորս զգայարանների մէջ: Ուսա-  
տանքի ֆիզիոլոգիական բաժանումը դարձաւ  
նուազ կատարելու, հետևաբար կենդանին յե-  
տադիմեց: Բանաւոր մեղուներն ու մրջյուններ,  
ինչպէս յայտնի է, անուշ ևն: Միւս կողմից,  
բազմաւարտ ընդունակ որձերն ու էգերը ան-

վերա միտքը միանգամայն անմատչելի է չքա-  
ւորներին, քանի որ ապրուստն այնտեղ շատ  
թանկ է։ Մինչև այժմ այդ ջրերի ամառնային  
ընակիչները մեծ մասամբ կրեաններն էին, ու-  
րոնք այնքան բովանդակալիկ համար չէին դնում այն-  
տեղ, որքան հազարավոր թիւաները ստանալու և  
մեծ գումարներով թուղթ խաղալու համար։ Ա-  
ւելորդ է ասել, թէ ինչ մեծ մարդասիրութիւն  
կը լինի, եթէ բարեգործութեան աշուղի ճանա-  
պարհ բաց անել զէպի ջրերը այն դժբաղդների  
համար, որոնք հիւանդ են, բայց չեն կարող դը-  
նակ կրեաններ յափշտակած սքանչելի բուժա-  
վայրերը...

\*

Մենք առաջներում առիթ ենք ունեցել յայտ-  
նելու, որ եւրոպական գիտնականները Մենսէն  
փորձում են ապացուցանելու, որ հայերը հին  
հետախնայներն են ծագել և հետախնայների կամ  
հատերի թողած արձանագրութիւնները, որոնք  
բաւական թուով գտնվել են Փոքր-Ասիայում, կա-  
րելի է կարգաւ հայերէնի միջոցով։ Անցեալ տա-  
րի պրոֆէսոր Մենսէն իր ապացոյցները հաւա-  
քեց մի գրքի մէջ, որի խորագրութիւնը խոս-  
տացաւ տալ Վիէնայի Հանդէս Ամսօրեանը,  
բայց բաւականացաւ մի կտոր միայն թարգմա-  
նելով։ Մենսէնի գիտը առհասարակ շատ հա-  
ւանական և համոզիչ չը թուաց գիտնական աշ-  
խարհին։ Եստեղ չէին հաւատում, թէ հատեան  
արձանագրութիւնները հայերէն լինեն կամ հա-  
յերէնի նախնական ձեւը պարունակեն իրանց  
մէջ։ Բայց այդ սկզբնական վերաբերմունքը  
այժմ կամաց կամաց տեղի է տալիս մի տրա-  
մադրութեան, որ նպատաւոր է Մենսէնի փոր-  
ձերի համար։ Հանդէս Ամսօրեայի վերջին հա-  
մարում տպւած է Հ. Յիմլերի մի յօդուածի  
թարգմանութիւնը, ուր պրոֆէսոր Մենսէնի գի-  
տը այսպիսի գնահատութեան է արժանացել.

Թերևս կարելի է իբրեւ շահուն համար, որ  
հոս բացայայտ խոստովանիմք,—վասնի զի կըր-  
նայ նոյնն այնքալ ալ պատահած ըլլալ,—որ եր-  
կար ժամանակ Մենսէնի Հատեան խոգարկու-  
թեանց մասին անտարբեր և բաւական սկզբունք  
էի, որ իւր առաջին հետազոտութիւնը վերջի-  
շաւ լրագրէի մէջ, ինչպէս և առաջիկայ գրի-  
քը վեր ի վերջ կարգիցն ետքը, շատ շատ  
հինարուրդ էս-ի բայց ոչ թէ «ստոյգ է»-ի  
ազդեցութիւնը զգացի։ Մասնաւոր որ երկու  
տեղն ալ յաւանք բերված թարգմանութեան  
փորձերը զիս համոզելու չարի գործութիւն չու-  
նէին։ Մասնաւոր այն վարկեանէն, որ ես ան-  
ձամբ արձանագրութեանց ձեւը զարկի և  
ջանացի, որ անոնց ձեւերը Մենսէնի ցու-  
ցումները վրաս ներգործեն՝ տեսայ միշտ ա-  
ւելի մեծ ստուգութեամբ՝ որ Մենսէնի ըն-  
թերցման ծանր գործին մէջ իրմէ յայտնուած  
անհակառակելի իրողութեանց և ոչ միայն  
առաւել կամ նուազ հաւանական հնարաւո-  
րութեանց վրա է խնդրել։ Բնականաբար,  
այս պէտք չէ այնպէս հասկնալ՝ իբր թէ Մեն-  
սէնի բոլոր հատադասներն ուղիղ են և թէ  
սրբագրուելու կարօտ չեն։

Հարկաւոր համարելով պրոֆէսորի սխառմի  
մէջ փոփոխութիւններ մտցնելու, Յիմլերն ասում է.

ընդունակ են աշխատանքի, որի հիմքը ի հարկէ  
նոյնպէս կայանում է կարողութեան որոշ աստի-  
ճան պարզացման մէջ։ Քանի որ անսեռ մըջին-  
ները և մեղուները պէտք է անշուշտ երևան  
գային աւելի ու լաւ քան բնականները, ուրեմն  
եղել է ժամանակ, երբ մեղուներն ու մըջիննե-  
րը միանգամայն ընդունակ էին և աշխատելու  
և նոր անհատներ վերաբարձրելու և երբ հե-  
տաւար մեղուների ու մըջինների գործարան-  
ների մէջ եղած աշխատանքի ֆիզիոլոգիական  
բաժանումը աւելի կատարեալ էր քան այժմ,  
որովհետև նրանցից իւրաքանչիւրի մէջ առաջ  
պատճառավորում էին և աշխատութեան գոր-  
ծարանները և վերաբարձրման գործարանները։  
Հապա ինչ պայմանների ազդեցութեան տակ  
է տեղի ունեցել աշխատանքի ֆիզիոլոգիական բա-  
ժանման թուլացումը և հետաւար կազմուածքի  
ստորացումը, պարզացումը, յետադիմութիւնը։  
Անշուշտ աշխատանքի տնտեսական բաժանման  
ազդեցութեան տակ։ Երբ մեղուներն ու մըջին-  
ները անգիտակցաբար բաժանեցին իրանց մէջ  
իրանց հասարակական աշխատանքը, այնպէս որ  
մասնը սկսեցին միայն աշխատել, իսկ միւսները  
միայն վերաբարձրել նոր սերունդ, այն ժամա-  
նակ՝ ընական ընտրակալութեան միջոցով՝ աշ-  
խատանքի այդ բաժանումը սերունդների ընթաց-  
քում մեղուրեց այդ յատուկ աշխատանքների  
համար անպէտք ընդունակութիւնները և ոյծերը։  
Այդպէս ուրեմն, աշխատանքի հասարակական  
բաժանումը առաջացրեց աշխատանքի ֆիզիոլո-  
գիական բաժանման թուլացումն և այդպիսով  
ստորացրեց մեղուների ու մըջինների զարգաց-  
ման աստիճանը։

Մարդկային հասարակութիւնը կազմակերպւած  
է, ի հարկէ, ոչ աւելի վաղ քան մըջիններից կամ

Յաջորդաւ պիտի փորձեն ընթերցողին արձա-  
նագրութեանց առաջնորդութեամբ ցուցնելու  
թէ ինչու Մենսէնի ընթերցումն թէպէտ առ-  
բորովին յաջող համարելու է։

Քառասուն տարի առաջ Ստեփանոս Նա-  
զարեանց յանդիմանութիւն ունեցաւ ասելու թէ  
սուտ է Միսթարեան վարդապետները արած և  
բոլոր տիրացունքի մեծապարծութիւնը այնքան  
հաճելի կերպով չզոյր այն գիտը թէ հայոց լե-  
զուն Աղաւթի լեզուն է և թէ Աստուած դրախտի  
մէջ առաջին մարդու հետ հայերէն էր խոսում։  
Նազարեանց յանդիմանութիւն ունեցաւ կրկնելու  
գիտնականների այն կարծիքը թէ հայերէնը  
հնդկա-եւրոպական լեզուների մի ճիւղաւորու-  
թիւնն է ներկայացնում։ Հայոց տիրացունքի  
խառաքապաշտ բանիքը մի ահագին վայնասուն  
բարձրացրեց այդ ազդեցական յանդիմանութեան  
դէմ և անձններին ու հայոյններին մի հեղեղ  
թափեց խեղճ Նազարեանցի վրա։ Քառասուն  
տարեկալ մէջ գիտութիւնը իր անողորմ քննա-  
կան միջոցներով այսքան հեռացրեց հայերի  
սկզբնաւորութիւնը պատմական առասպելներից  
և տիրացունքի սկզբնաւորներից։ Այժմ Յով-  
սէփ Զեքէզեանցիների ժառանգները լուռ ու  
մունջ նայում են գիտութեան արդիւններին  
և սրտի ցաւով հայտնում են իրողութեան  
հետ։ Հին տիրացունքի այժմ չբացել է,  
հարկաւոր չէ ոչ ոքին։ Միայն թիֆլիսում  
հրատարակվող այն խեղճի ամսագրի իւր-  
բաղիր, յուսահատված այն հանգամանքից, որ  
անպատկանելի ամեն կողմից չընկալուած է  
նրան իր ոչնչացնող ալիքներով, աշխատում է  
չափազործել հին տիրացունքի զգացմունքը։  
Բայց ի՞նչու։ Ժամանակներից չեն վերադա-  
նում և մեր հասարակութեան մէջ այլ ևս չը  
կան հնութեան այդ փառանքները, որոնց կարող  
լինէին կաշիւ հոգով աղքատները՝ ապրուստ և  
գոյութիւն հայթայթելու համար...

ԴԱՍԱՍՍԱՆԱԿԱՆ ԴԱՆԻՃԻՑ

«Մշակի» ընթերցողները երևի յիշում են, որ երկու  
տարի առաջ Պրիշչէվսկիի դատարանի միջոցով  
պահանջում էր 99 հազար ռուբլի իշխան Մուխ-  
րանսկուց այն պարտագրի հիման վրա, որ Պրիշ-  
չէվսկի ստացած ունէր իշխան Մուխրանսկու 50-  
րից։ Իշխան Մուխրանսկի կեղծված յայտարարեց  
պարտագրի վրա եղած իր հօր ստորագրութիւնը  
և ուղղակի մեղադրեց Պրիշչէվսկուն, որ նա է  
կեղծել այդ ստորագրութիւնը։ Պրիշչէվսկի վըր-  
դոված այդ մեղադրանքից, սպանութեան փորձ-  
արեց իշխան Մուխրանսկու կեանքի դէմ, վրա-  
ւորեց նրան, իսկ ինքն էլ անձնասպանութիւն  
գործեց։ Պրիշչէվսկու մասին յետոյ նրա ժա-  
ռանգներ մնացին նրա երկու աղջկաները և նրա  
կինը, որ մեռաւ Օդեսայում։

Պրիշչէվսկու ժառանգները, փաստաբան Ծոնի  
միջոցով, խնդրեց տուեցին դատարանին, որի  
մէջ բացատրեցին, թէ նախնական դատարա-  
նը, ընկելով ներկայ տարվալ լուսնարի 12-ին  
փեթակը։ Աշխատանքի տնտեսական բաժանումը  
խաղում է նրանում ոչ նուազ կարևոր դեր։ Ն-  
եթ մենք դեռ չենք հասել այնտեղ, որ մեր  
մէջ առաջ գային սեռադուրկ ամուսնուներ, սա-  
կայն հասել ենք դոնէ քաղաքական ժողովուր-  
թեան (թէօրիային \*)։ Իսկ այդ քիչ բան չէ,—  
այդ արդէն անսեռ բանուորի դադարան է,  
որին մարդկային միտքը գուցէ յաջողեցնի տալ  
մարմին և արիւն։

Աշխատանքի տնտեսական բաժանումը, այսինքն  
բաժանումը առանձին անհատներ մէջ, կաղ-  
մում է, Սպէնսէրի տեսակէտով, մեր ամբողջ  
բարդակրթութիւնը հիմքը։ Ուստի հետաքրքրի  
է իմանալ, թէ ինչ կապ ունեն այդ բաժանու-  
մը և ֆիզիոլոգիական բաժանումը, այսինքն  
աշխատանքի բաժանումը մի անհատ տարբեր  
գործարանների մէջ։

Երբ կառավարչինքնի դասը վերջնապէս դա-  
վեց նախնական հասարակական միատեսակ  
զանգուածից և վերցրեց իր վրա մասւոր աշ-  
խատանքը, թողնելով ֆիզիկական կառավար-  
\*) Ահիւրակ Մալթուսի Թէօրիայի մասին։ Անցեալ  
դարի վերջում և մեր դարի սկզբում ապրող այդ  
այսինքն քաղաքականները իր «An Essay on the Prin-  
ciple of Population» գրքի մէջ ապացուցանում էր,  
թէ ազգաբնակչութիւնը ձգտում է ունի բազմակի  
բերելու չափական առաժաոակութեամբ (1, 2, 4, 8...)  
միջոցաւ։ Ապրուստի միջոցները ամենալաւ պայմա-  
ններում կարող են աճել միայն թուաբանական առա-  
ջատուութեամբ (1, 2, 3, 4...), Անուսակութիւնը  
պակասեցնելով ծնունդների թիւը, և արեւակութե-  
ւոյ աւելացնելով մահերի քանակութիւնը, մասամբ  
հաւասարակշռութիւն են պահում՝ այդ երկու կող-  
մունքների մէջ, չը թողնելով, որ ազգաբնակչութեան  
քանակութիւնը չափաքան մեծանալ ապրուստի մի-  
ջոցների քանակութիւնից, բայց վաճառք այնու ամե-  
նային անբնականութիւն է։ Մալթուսի կարծեքով, ուս-  
տի նա առաջարկում էր ստիճակութեան քաղաքական  
զգայման՝ սկզբունքը պիտիքն, այն սկզբունքը թէ  
ընտանեկ պահելու միջոցներ չունեցող մարդը կա-  
րող է և պարտական է հրաժարել ամուսնանալուց։

ընկել որոշումը՝ դադարեցնել իշխան Մուխ-  
րանսկու յայտարարված կեղծումի գործը, որով-  
հետև Պետերբուրգի գաղտնաստանական պալատի  
պրօկուրորի մօտ եղած գաղտնաստանական-ու-  
սանկարական էկզպիտիղան այն երբակացու-  
թեան եկաւ, որ պարտագրի վրա եղած ստորա-  
գրութիւնը իշխան Մուխրանսկու ձեռքն է, և  
ոչ թէ կեղծված է,—մեզնե՞ր կեղծումի վերաբե-  
րեալ գործը դադարեցնել։ Այդ որոշման դէմ  
զանդատ տուեց պալատին իշխան Մուխրան-  
սկու հաւատարմատար Գուցեմաճէ, բայց դա-  
տաստանական պալատը այդ գանդատը չը յար-  
գեց և առանց հետեանքի թողեց։

Վերոյիշեալ հիման վրա պ. Ծոնը խնդրում  
էր դատարանին վերսկսել Պրիշչէվսկու պահան-  
ջը իշխան Մուխրանսկուց քաղաքացիական կար-  
գով և պահանջը ապահովելու համար արգելք  
դնել իշխան Մուխրանսկու անշարժ կայքի վրա,  
այն է Մաղառօսկայա կղզու մի մասի վրա,  
որ բաղկացած է 7150 քառակուսի սաժնից և  
գտնվում է Քիթիսում, Կուրի վրա երկու կա-  
մուրջների մէջտեղը։ Պրիշչէվսկու պահանջը ա-  
պահովանելու վերաբերեալ իմ խնդրեքն, ա-  
սում է պ. Ծոն, պէտք է բաւարարութիւն տըր-  
վի հետեւեալ պատճառներով։ 1) կեղծումի մա-  
սին վէճը վերանայով՝ պահանջը կատարելապէս  
իրաւացի է դառնում։ 2) իշխան Մուխրանսկու  
սկսած վէճից երկուս է, որ նա չէ կամենում  
վճարել իր պարտքը և 3) եթէ պահանջը չա-  
պահովվի, Պրիշչէվսկու աղջկաները կարող են  
չը ստանալ իրանց պահանջը, որովհետև իշխան  
Մուխրանսկի բանակցութիւններ է վարում իր  
բոլոր կայքերը ծախելու համար։

Այդ խնդրը նախնական դատարանում դե-  
կուցանվելուց յետոյ, իշխան Մուխրանսկու հա-  
ւատարմատար պ. Գուցեմաճէ խնդրեց դատա-  
բանին մերժել Պրիշչէվսկու ժառանգների խն-  
դրեքը, բացատրելով, թէ բանի որ դեռ դատա-  
բանի որոշումը չը կայ կեղծումը դադարեցնե-  
ւում վերաբերման, այդ դուրմէնը պահում է  
իր ոյժը և հարկ չը կայ պահանջը ապահովել,  
քանի որ իշխան Մուխրանսկի միլիտատէր է և  
միշտ կարելի է նրանից բաւարարութիւն ստա-  
նալ։

Նախնական դատարանը չը յարգելով իշխան  
Մուխրանսկու հաւատարմատար բացատրու-  
թիւնը, որոշեց՝ Պրիշչէվսկու ժառանգների 99  
հազար ռուբլու պահանջը ապահովելու համար  
արգելք դնել իշխան Կ. Ռ. Մուխրանսկու ան-  
շարժ կայքի վրա, այն է՝ Մաղառօսկի կղզու  
մի մասի վրա, այն սահմաններում, որ մասնա-  
ցոյց է արված պ. Ծոնի խնդրեցում։

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ

Ամսիս 4-ին, Նոր-Բայազետում մատաղ անելու  
պատճառով, տէրութենքի և ժողովրդի մէջ աղ-  
մուկ բարձրացաւ և տէրութենքը գործադու ա-  
րին։ Ահա մանրամասնութիւնները։

վողներին, այդ եղաւ. առաջին բայը աշխա-  
տանքի տնտեսական բաժանման։ Այդ ժամա-  
նակ՝ կառավարչութիւնի ներառային համակար-  
թութիւնը պէտք է աստիճանաբար պարզուար  
և զանգի ներքին ծաւալը և մտաւոր ընդունա-  
կութիւններ չափը՝ փոքրանալ, որովհետև  
սրանք հետզհետէ աւելի ու աւելի պակաս էին  
պէտք գալու, քանի որ կառավարչութիւնի տե-  
ղակ ժողովում էին կառավարչներին։ Կր նշա-  
նակի՝ աշխատանքի ֆիզիոլոգիական բաժանման  
սահմանները նեղացան։ Նոյնը կատարվեց և  
կառավարող դասի չըջանում։ Որքան նրա ներ-  
քաղացուցիչները աւելի ու աւելի էին խորա-  
տուգում աշխատանքի իրանց բաժնի ընկած  
մասի մէջ, այնքան նրանք մկանային համա-  
կարգութիւնը թուլանում էր և սկսեցին դա-  
նում էին աւելի նուրբ ու աւելի դիւրաբեկ։  
Քանի այնուհետև անհատական գործունէութիւ-  
նը մասնաւորվում է, այնքան աւելի թուլա-  
նում է աշխատանքի ֆիզիոլոգիական բաժա-  
նումը։ Ֆիզիկական աշխատանքի չըջանում կա-  
րելի է յիշել, որինակ, կոշկակարին կամ դերձա-  
կին, որ, չը խօսելով նրա մտաւոր թուլութեան  
մասին, չարեանի ծաղաղատելի նստած լինե-  
լով և միայն ձեռքի միակերպ շարժումներ անե-  
լով, դարգացնում է այդ ձեռքի մի քանի մը-  
կանները, մինչդեռ ոտները թուլանում են ան-  
գործութիւնից։ Նրա նախնիի մէջ, որ այնքան  
կոշիկ էր կարում, որքան ինքը ծաղում էր, աշ-  
խատանքը հաւասարապէս բաշխվում էր բոլոր  
գործարանների մէջ, իսկ այդ յետնորդի մէջ  
գործում են աւելի քիչ թուով գործարաններ։  
Մտաւոր աշխատանքի չըջանում կարելի է յի-  
շել, որինակ, չափազանց խելօք մարդկանց,  
որոնք զուրկ են դեղատիրական զգացմունքից։

Երաշտութեան պատճառով տեղիս հասարա-  
կութիւնը միտք չէր ցաւ մատաղ անելու, որպէս  
զի երկինքը խղճայ և անձրե գայ։ Ժողովրդի  
մարդիկ երկու շաբաթվալ ընթացքով ժողովե-  
ցին հասարակութիւնից փող, տաւար, ոչխար,  
գառ, իւղ, ալիւր և այլն։ Յուլիսի 3-ին, հաւա-  
քելով բոլոր մատաղացուները քաղաքից 2 վերստ  
հեռու ս. Յովհաննէս ուխտատեղում, գործի  
գլուխ անցնողները մարթիւն են անասուններին  
և զօրանք սարքում հարկերից աւելի պղինձ-  
ներով։ Տեղական սովորութեան համաձայն, մա-  
տաղացուի «կաշին» և «հերին» (առաջին մի ոտը  
աղբով) պատկանում են քահանային, և որով-  
հետև մատաղացուների թիւը աւելի է լինում  
տէրութենքի թիւից (Նոր-Բայազետը 11 քահանայ  
ունի), այդ պատճառով տալիս են քահանաներին  
իրանց թիւ համեմատ՝ թէ կաշիներից և թէ  
հերիքից, իսկ մնացած կաշիները պահում են  
որով չպատանակի համար։ Սակայն մեր քահանա-  
ները զարացած այն հանգամանքից, որ պակաս  
են ստանում իրանց հատկութիւն, պահանջում են  
անպայման բոլոր մատաղացուների կաշիները,  
սպառնալով, որ հակառակ դէպքում չեն մաս-  
նակել մատաղին, այսինքն չեն զայ օրհնելու։  
Նւ այդպէս էլ եղաւ։ Զը ստանալով աւելի ուրդ  
կաշիները, նրաք չը գնացին թափորի հետ  
դէպի զոհարանը, այլ երբ այդ հանդէսը սկսվեց,  
տէրութենքը բոլոր միաձայն հրաժարվեցին  
մասնակցելու այդ ծրագրատարութեան և դէն  
գցելով իրանց շուրջառները՝ տուն գնացին։  
Ժողովուրդը այդ դէպքից կատաղեց և, աղբուկ  
բարձրացնելով, պահանջեց տէրութենքին։ Բայց  
բարեկարգելը, հանգստացնելով ամբողջ, ինքը  
չարունակեց թափորը և եկեղեցական դասով  
(տիրացունքներով) շտապեց օրհնել մատաղը։

Նոյն օրը, երբ մատաղը վերջացաւ, ժողո-  
վուրդը սկսեց ցոյցեր անել. նախ՝ փողոցներում,  
և ապա կամենալով փակել եկեղեցին՝ դիմեց  
գործակալին և պահանջեց, որ ուրիշ տեղից  
տէրութէր բերել տայ, որպէս զի երեկոյան կա-  
տարէ ժամասացութիւնը։ Յետոյ նոյն օրը, երե-  
կոյան, ամբողջ խառնվեց եկեղեցին և բազմ  
քահանաներին դիմաւորելու, բայց ոչ մի  
տէրութէր չեկաւ եկեղեցի, այլ ժամասացութիւնը  
կատարում էր գիւղից եկած քահանան՝ գործա-  
կալի հրամանով։

Հակառակ քահանաների վարմունքին, ժողո-  
վուրդը աղմուկ անելով իստ խից քահանանե-  
րից նաև իր տուած թէ կաշիները և թէ մա-  
տաղացու մանրը (հերիքը), որ միւս օրը դար-  
ձեալ փեց եկեղեցու բազում և բաժանեց հա-  
սարակութեան աղքատ դասակարգին, իսկ կա-  
շիները ծախեց։ Գրանով չը բաւականանալով  
ժողովուրդը, բազմեց զլխատրի միջոցով, հե-  
ռազրով դիմեց Վեհափառին այդ տխուր անցքի  
առիթով և սպասում է կարգադրութեան, որով-  
հետև ժամասացութիւնը դեռ ևս խանգարված  
մնում է, իսկ ժողովուրդը գրգռման մէջ է։

Կռան

Այդ օրինակներ թիւը կարելի է աւելացնել  
անվերջ կերպով։ Բայց այնքան էլ բաւական  
է ցոյց տալու համար, որ աշխատանքի տնտե-  
սական և ֆիզիոլոգիական բաժանումները փո-  
խադարձ բացառող են միմեանց, որ որքան  
թուլ է մէկը, այնքան զօրեղ է միւսը և ընդհա-  
կառալը, և որ հետեւաբար հակառակ են միմեանց  
և օրգանական առաջադիմութիւնը ու հասարա-  
կական առաջադիմութիւնը։

Հասարակութիւնը օրգանիզմ չէ, գործարա-  
նական չէ, այլ հաւաքածու անհատական գոր-  
ծարանակալների. նա կազմված է ոչ այս կամ  
այն պաշտօնակալութեան համար յատկապէս  
նախատեսանված գործարաններից, այլ անհատ-  
ներից, որոնք ունեն բոլոր գործարանները և  
որոնք մէջ կատարվում են բոլոր գործարանա-  
կան պաշտօնակալութիւնները։ Հասարակական  
օրգանիզմի դադարեցումը բարբոսին հակառակ է  
Բէթը օրէնքին։ Օրգանիզմը (անհատը) վերածու-  
մը գործարանի, որի միջոցին խանգարված է  
նրա ամբողջականութիւնը և անկախութիւնը,  
փոխանցում է դասադասատեսակից դէպի միա-  
տեսակը, ընդհանուրից դէպի մասնաւորը, բաղ-  
մակողմանից դէպի միակողմանին և հետեւաբար  
չէ կարող ապացուցվել Բէթի օրէնքով։

Անհատը չէ կարող դառնալ գործարան, որով-  
հետև չէ կարող երբեք կորչել հանրե և տա-  
ճութիւնը զգալու ընդունակութիւնը։ Ուրեմն Բէ-  
թը օրէնքը պէտք է կատարվի ոչ անհատի  
գլխին, այլ անհատի մէջ։ Նա չը պէտք է նը-  
պաստի մի աւելի բարձր ամբողջութեան բաղ-  
մատեսակութեան, այլ ինքը՝ իբրև անկախ ամ-  
բողջութիւն՝ պէտք է դառնայ բաղմակողմանի։

Յ. Յովհաննիսեան



